

**<<ՀԱՅԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿ>> ՕՐԱԹԵՐԹԻ
27.09.2011 Թ. <<ՀԵՏՔԵՐԸ ՋՆՁԵ՛Ն ԵՆ>>
ՀՈՐՎԱԾԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ**

Հոդվածի հեղինակը, հավատարիմ մնալով իր ձեռագրին և խոսքերը միտումնավոր համատեքստից հանելով, փորձել է ստեղծել թյուր կարծիք, թե իբր մինչև 1999 թ. տեղի ունեցած ընտրությունների վերաբերյալ որևէ փաստաթուղթ չի պահպանվել, ինչի վերաբերյալ <<...թերթի թղթակցի հետ զրույցում ասել է ԿԸՀ անդամ Տաթևիկ Օհանյանը>>:

Մինչդեռ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ Տաթևիկ Օհանյանը, նշելով, որ 1999 թ.-ից հետո տեղի ունեցած ընտրությունների վերաբերյալ բոլոր տեղեկությունները տեղադրված են ՀՀ ԿԸՀ համացանցային կայքում, շեշտել է, որ մինչ այդ տեղի ունեցած ընտրությունների վերաբերյալ փաստաթղթերը պահպանության են հանձնվել Հայաստանի պետական արխիվ:

Այս խնդրի առնչությամբ անհիմն շահարկումներից խուսափելու նպատակով ևս մեկ անգամ տեղեկացնում ենք, որ մինչև 1999 թ. կայացած ընտրությունների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի պետական արխիվում:

***Հայաստանի Հանրապետության
կենտրոնական ընտրական հանձնաժողով***